ջակաները՝ Երեւան, Մուղնի, Կարբի, Բջնի (Թղ. 206ա-227ա)։

1698 Օգոստ. 16ին կը մեկնի Էջմիածինէն երթալու համար Կ. Պոլիս։ Կ՚անցնի Երասխէն ու կը հանդիպի Մաստուռուն, Պայազիտ, Ուչքիլիսա, Թօփրագղալա, Մուլլասուլէյման, Ղօփուզ սար կամ Սուկաւ լեռան, Պաշքօյ, Պօյաճի, Արուճագրակ, Գոմաձոր, Վաղժվան, Հասանղալա, Տէվէպօյնի, Մուտրկանու վանք, Էրզրում (Օգոստ. 29-Սեպտ. 22), Օրթիկլի կալէր, Ովաճուխ, Ջիփոտ գեղ, Ս. Յովհաննու վանք, Վարիզոնց գեղ, Աղբանիս գեղ, Գողուն գեղ, Ղըթովայի լեռ Բաբերդու, Աղաճպաշի, Մօհրճիլէր, Տրապիզոնու վանք, Տրապիզոն (227ա-228ա)։

1698 Հոկտ. 6ին նաւով Տրապիզոնէն կը մեկնի ու հանդիպելով Զէֆրայու լիման, Ունեա, Ֆացա, Ղումլու, Սնապ, Պօղթափա, Աղլիման, Ինճէպուրուն, Իստէֆան, Կինօլա, Ինապօլի, Կիտրօզ, Ամասրա, Ալակրոյ լիման, Փէֆքէոյ, Զիլա, Ֆէնէր, Ըստամպօլ Էմինօկի և Հոկտ. 24ին երեք դպիրով իշխանօք և քահանայիւք կ՚առաջնորդուի Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին (Թղ. 228բ-229ա)։

1698 Հոկտ. 24էն **1701** Սեպտ. 1 կը մնայ Կ. Պոլիս։ Այդ միջոցին երկու անգամ, **1698** Դեկտ. 23ին և **1699** Յուլիս 12ին կ՚երթայ Էտիրնէ իր պատրիարքութեան պէրաթը վերահաստատելու ընդդէմ Կայծակ Գալուստ վարդապետի։ Անգամ մըն ալ 1699 Մարտ 4ին Էտիրնէ երթալու համար կ՚ելլէ Կ. Պոլսէն, և հասնելով Չօրլու՝ չի շարունակեր ճամբան ու կը դառնայ Կ. Պոլիս։ Երթուդարձին կը հանդիպի Պալիլի, Չէքմէճէ, Չըրփըչի չայիր, Ղումպուրղազ, Սիլիվրի, Ղընըխլի, Չօրլու, Պուրղազ, Պապաէսքիսի, Ղուլլալի, Հաֆզա, Թէքիրտաղ, Սիլիվրի, և Փոքր Չէքմէճէ (Թղ. 229ա-258ա)։

1701 Սեպտ. 1ին նաւով կը մեկնի Կ. Պոլսէն ու կը հանդիպի Թէքիրտաղ, Պօղազհիսար, Միտիլի, Սախըզ, Սուսամ ատասի, Ստանքօյ, Սումպաքի ատասի, Ռատօղ և Սեպտ. 13ին կը հասնի Եաֆա։ Երկու օր Թէքիրտաղ և երկու օր Զանագգալէի նեղուցը և Ստանքօյ սպասած ըլլալով՝ ճամբորդութիւնը կը տևէ ութ օր։ Սեպտ. 13էն 23 կը մնայ Եաֆա. Նոյն օրը անկէ կը մեկնի դէպի Ռամլէ ու հոն կը սպասէ երեք օր. ամսոյն 26ին Չէշմէլիի վրայով կ՚ուղևորի Երուսաղէմ, ու Սեպտ. 27ին, շաբաթ, Ս. Գէորգի տօնին օրը կը մտնէ Ս. Յակոբ (Թղ. 258ա-259ա)։

1701 Սեպտ. 27էն մինչև իր կեանքի վախճանը Ամդեցի կը մնայ Երուսաղէմ իբրև պատրիարք։ Միայն **1702** Օգոստ.